ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶ ԿՈՐՅՈՒՆ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԵԼ Է ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

26.01.2017 19:29

Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ ԱՐԴ/0041/01/16 քրեական գործով նշանակված դատական նիստի ընթացքում տեղի էր ունեցել միջադեպ: Նշված քրեական գործով մասնակցող պաշտպան՝ **փաստաբան Գեորգի Մելիքյանի** նկատմամբ Արմավիրի մարզի դատախազության դատախազ Կորյուն Ներսիսյանը թույլ էր տվել անօրինական գործողություններ:

Միջադեպի կապակցությամբ **հայտարարությամբ** է հանդես եկել ՀՀ փաստաբանների պալատի Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը, ինչի հիման վրա 23.12.2016 թվականին ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը դիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին՝ պահանջելով քննության առնել թիվ ԱՐԴ1/0016/01/16 քրեական գործով պաշտպան Գայանե Լյուդվիկյանի և թիվ ԱՐԴ/0041/01/16 քրեական գործով պաշտպան Գեորգի Մելիքյանի նկատմամբ ՀՀ Արմավիրի մարզի դատախազության դատախազ Կորյուն Ներսիսյանի դրսևորած վարքագիծը և վերջինիս ենթարկել պատասխանատվության:

ՀՀ փաստաբանների պալատում 26.01.2017 թվականին մուտքագրվել է ՀՀ գլխավոր դատախազության 16.01.2017թ. թիվ 20/10-9-17 գրությունը, որով ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 23.12.2016թ. դիմումին ի պատասխան, հայտնել են, որ ՀՀ գլխավոր դատախազի որոշմամբ Արմավիրի մարզի դատախազության դատախազ Կորյուն Ներսիսյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ:

Բեռնել ՀՀ գլխավոր դատախազության գրությունը.

Առաջարկվող նորություններ

26.10.2013ԱՐՏԱԿԱՐԳ ՈՒՂԵՐՁ. ԲՈԼՈՐ ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ՏՈՒԺԵԼ ԵՆ ՀՀ ԴԱՏԱՀՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՊՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ, ԲԱՅՑ ՉԵՆ ՁՐԿՎԵԼ ՊԱՏՎԱԽՆԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ

22.03.2017ՓԱՍՏԱԲԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼԸ ՄԵՐԺՎԵԼ Է

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })